ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին էթիկայի հարցերով համակարգողի դերակատարում վերապահելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում բացակայում է բարեվարքության, (ինթեգրեթի) քաղաքականության մշակման ու իրականացման հարցերով պատասխանատու պետական մարմինը, որը պետք է իրականացնի հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի, շահերի բախման և գործունեության սահմանափակումների, ակտիվների ու շահերի հայտարարագրման համակարգերի ստեղծմանը և զարգացմանը միտված պետական քաղաքականությունը:

ԵՄ բյուջետային աջակցության ֆինասավորման համաձայնագրի («Լրացում N1-Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին. փուլ II ֆինանսավորման համաձայնագիր») 16-րդ կետով նախատեսված է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) իր կողմից ընդունված վարքագծի տիպային կանոնագրքի և ուղենիշների հիման վրա վարքագծի ոլորտային կանոնագրքերի ընդունման գործընթացը համակարգելու լիազորության վերապահում:

Նշված նախապայմանի կատարումը ենթադրում է, մասնավորապես, հանրային ծառայության ոլորտի էթիկայի միասնական ուղենիշային դրույթների սահմանման, հանրային ծառայության ոլորտի համապատասխան մարմինների աշխատակազմերում էթիկայի հարցերով պատասխանատուների ինստիտուտի կայացման, վարքագծի տիպային կանոնագրքի ընդունման և դրա հիման վրա ոլորտային կանոնագրքերի մշակման ու դրանց դրույթների կիրարկման գործընթացում մի շարք հետևողական քայլերի իրականացում:

Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի միասնական էթիկայի կանոնները սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասում: Այդուհանդերձ, նշված օրենքում թվարկված էթիկայի կանոնները իրենց բովանդակությամբ չեն համապատասխանում ԵՄ և ՏՀԶԿ կողմից հաստատված հանրային ծառայողների էթիկայի կանոնների ուղեցույցի պահանջներին: Հանրային ծառայության տարբեր ոլորտներում էթիկայի միասնական կանոնների կիրառման միատեսակությունն ապահովող օրենսդրական

կառուցակարգերը բացակայում են: Արդյունքում, Հանրապետությունում չի ձևավորվել հանրային էթիկայի՝ միասնական ուղենիշային դրույթների հիման վրա գործող համակարգ և դրա հիման վրա չի իրականացվում համապատասխան քաղաքականություն:

Հանրային ծառայության ոլորտի համապատասխան մարմիններում էթիկայի հարցերով պատասխանատուների ինստիտուտի մասով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված են դրույթներ հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողովների վերաբերյալ, որոնց գործունեությունը, սակայն, արդյունավետ չէ: Գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում հանրային ծառայության ոլորտի մարմինների աշխատակազմերի էթիկայի հանձնաժողովների՝ Հանձնաժողովի հետ համագործակցությունը ինստիտուցիոնալացված չէ ոչ միայն էթիկային առնչվող, այլև շահերի բախմանը և գործունեության արգելքներին ու սահմանափակումներին վերաբերող դրույթների ընկալման ու մեկնաբանման, դրանց մասնագիտական խորհրդատվության, մեթոդոլոգիական աջակցության տրամադրման, հանձնաժողովների անդամներին, էթիկայի հարցերով պատասխանատուներին հակակոռուպցիոն կրթական ծրագրերում ընդգրկման և դրանց վերապատրաստման, ինչպես նաև այդ կապակցությամբ Հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման հարցերով:

Հայաստանի Հանրապետությունում հանրային էթիկայի համակարգի կայացման համար հանրային ծառայության ոլորտի էթիկայի հարցերով **համակարգումն առնվազն պետք է ենթադրի՝**

- էթիկայի հանձնաժողովների և էթիկայի հարցերով պատասխանատուների ինստիտուտի ներդնումը.
- էթիկայի ուղենիշային դրույթների մշակումը և ներդնումը.
- հանրային ծառայողի վարքագծի (էթիկայի) տիպային կանոնագրքի ընդունումը.
- հանրային ծառայողի վարքագծի (էթիկայի) տիպային կանոնագրքի հիման վրա ոլորտային կանոնագրքերի մշակման և ընդունման գործընթացի կազմակերպումը.

  - էթիկայի ոլորտային կանոնագրքերի մշակման և ընդունման գործընթացում մասնագիտական (խորհրդատվական) աջակցության տրամադրումը, այդ թվում՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացումը, ինչպես նաև իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական խորհրդատվության և պարզաբանումների տրամադրումը.

- հանրային ծառայության ոլորտի համապատասխան մարմինների աշխատակազմերի էթիկայի հանձնաժողովների, էթիկայի հարցերով պատասխանատուների ներգրավվածության ապահովումը էթիկայի ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում.

- էթիկայի հարցերով միասնական քաղաքականության իրականացման ապահովումը՝

- վարքագծի (էթիկայի) ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի մշակումը.

- վարքագծի (էթիկայի) ոլորտային կանոնագրքերի՝ վարքագծի (էթիկայի) տիպային կանոնագրքի դրույթներին համապատասխանության նկատմամբ մոնիթորինգի իրականացումը.

- վարքագծի (էթիկայի) տիպային կանոնագրքի դրույթների մեկնաբանությունը.

- հանրային ծառայության ոլորտի համապատասխան մարմինների աշխատակազմերի էթիկայի հանձնաժողովներին, էթիկայի հարցերով պատասխանատուներին ոլորտային կանոնագրքերի դրույթների կիրարկման կապակցությամբ մասնագիտական խորհրդատվություն, մեթոդոլոգիական աջակցություն տրամադրելը.

- հանրային ծառայության ոլորտի համապատասխան մարմինների աշխատակազմերի էթիկայի հանձնաժողովների անդամների, էթիկայի հարցերով պատասխանատուների համար հակակոռուպցիոն դասընթացներ ներդնելն ու անցկացնելը, նրանց հակակոռուպցիոն կրթական ծրագրերում ընդգրկելը, թրեյնինգներ անցկացնելը, ինչպես նաև վերոնշյալ սուբյեկտների կարողությունների զարգացմանն այլ եղանակներով (սեմինարների անցկացում, հակակոռուպցիոն թեմաներով ձեռնարկների, օժանդակ նյութերի մշակում և այլն) օժանդակելը.

- հանրային ծառայության ոլորտի համապատասխան մարմինների աշխատակազմերի էթիկայի հանձնաժողովների (դրանց ներկայացուցիչների) հետ «հետադարձ կապի» ապահովումը, այդ թվում՝

- միասնական հաշվետվության մշակումը և հրապարակումը.

- էթիկայի կանոնների խախտման, շահերի բախման և գործունեության անհամատեղելիության դեպքերի վիճակագրության ներդնումը, վարումը և հրապարակումը.

- վարքագծի կանոնների պահպանման առնչությամբ առանձին թեմատիկ ուսումնասիրությունների իրականացումը, պրակտիկայի ամփոփումը, դրանց

արդյունքների հիման վրա կարգավորող օրենսդրության և իրականացվող քաղաքականության մեջ փոփոխությունների համար առաջարկությունների ներկայացումը:

Համակարգման գործառույթի լիարժեք իրացումն ապահովելու համար օրենսդրական փոփոխությունների միջոցով պետք է սահմանվեն վարքագծի (էթիկայի) տիպային կանոնագրքի հիման վրա ոլորտային կանոնագրքերի ընդունման և դրանց կիրարկման վերաբերյալ Հանձնաժողովին տեղեկատվություն և հաշվետվություն ներկայացնելու պարտականությունը: